Հայոց և Ցունաց առ Դատաւորն, բայց չդիտէին ինչ՝ եւ լուութեամբ 'ի զննին կային եւ վշտացեալ իմն էին 'ի նմանէ, զի չյայտնէր ինչ նոցա։ Հայք յորդորէին զԴատաւորն կոչել երբեմն զնուրի Էֆէնտի 'ի խորհուրդ, զի պաշտօնեայ է և ըստ գրելոյ Դենպետին գործակից նմա։ Իսկ նա ասէր, իմ գոլով Երուսաղէմացի՝ գիտեմ զորպիսութիւն երկրիս և զհանգամանս երկուց ազգաց. նախ՝ կարգաւորեցիս զամենայն ինչ ըստ եղանակին, եւ ապա ազգ արարեալ նմա սկիզբն արարիս գործոյն։ Այլ իբրեւ դանիկատ ասացին Հայք ցնուրի թէ ընդէ՞ր երկարէ նա զգործն. ասէ՝ երկայնամիտ լերուք տեսանել թէ զի՞նչ Դատաւորն եւ քաղաքացիք ունին առնել, այնուհետեւ կամ սկիզբն առնեմք գործոյն, կամ գրեմք 'ի Կոստանդինուպոլիս, կամ երթամք անդ, զամենայն ինչ մի առ մի պատմել Տէրութեան, կամ Տէրութիւնն զմեզ աքսորէ, և կամ հզօր զօրութեամբ վերստին դառնամք այսր։ Առ այս 'ի կասկածի եղեն Հայք՝ զի մի ծանրացի գործն, և հանդիպեսցին ցասման Արքայի՝ որպէս առաջինքն։ Զի թէպէտ գրեալ էր Փոխանորդն ծանուցանել զհակառակողն, բայց 'ի վերջոյ յաւելոյր վարիլ խոհեմութեամբ, զի յայս նուազ եւս չելանել գործոյն 'ի գլուխ՝ ունէր ծանրանալ։ Ապա յորդորանօք Հայոց գնաց Զուխատարն առ Դատաւորն հարցանել զգործոյն, զի պատուէր ունիմք ասէր զկնի չորից աւուրց դարձուցանել զսուրհանդակն, և այս իններորդ օր է չտեսաք նշան ինչ։ Իսկ նա չողոքորդ բանիւք ամոքեալ զմիտս նորա՝ արձակէ խաղաղութեամբ յինքենէ, և կոչեալ առանձին զմին 'ի ժողովրդոցն Հայոց զԳէորգ Պոտուռեան՝ պատմէ զանցս Զուխատարին, և յայտ առնէ զխնդիր իւր, և նորա եկեալ պատմէ Պատրիարքին։ Եւ 'ի վաղիւն Հայք իրր յանդէտս գնացին առ նա (յ8 Նոյեմբերի) և 'ի լինիլ երկար բանից՝ դարձեալ առաջի ետ նոցա զխնդիր իւր, և 'ի վերայ այսր տարապայման երկարէր զիօսս իւր, և 'ի վերջոյ ասէ յայտնապէս 300 քսակ միայն ինքեան։ Այլ նոքա չառին յանձն, զի 'ի լսել Պատրիարքին և Ծերունեաց վշտանան, և անպատճառ գրեալ ծանուցանեն 'ի Դուռն. և 'ի յառաջ բերել նորին զմուրհակ նախորդին իւրոյ, ասեն՝ եթէ կամիս